ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ)

ՈՐՈՇՈՒՄ № 1/1-Լ

(Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին)

13.09.2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հաշվիչ հանձնաժողովը (այսուհետ՝ Հաշվիչ հանձնաժողով), մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ Գևորգ Գևորգյանի, անդամներ՝ Աշոտ Խլոյանի, Գագիկ Մայիլյանի, Կարինե Ղաշանգյանի, Աստղիկ Գևորգյանի, Հեղինե Մանուկյանի, Նազիկ Մալխասյանի, Հովհաննես Եգորյանի և Հասմիկ Թադևոսյանի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 9.1-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 15.25-րդ և 15.29-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով 13.09.2025 թվականին տեղի ունեցած ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրակարգային հարցով քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 13.09.2025թ. թիվ 2-Լ արձանագրությունը,

նկատի ունենալով այն, որ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող 2912 փաստաբանից մասնակցել է 1411 փաստաբան,

հիմք ընդունելով քվեարկության արդյունքներն առ այն, որ քվեարկության մասնակիցների կեսից ավելին՝ 1354 ձայնով, կողմ է քվեարկել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրակարգային հարցով, հետևաբար ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծը համարվում է ընդունված,

միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Ամփոփել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրակարգային հարցով ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 13.09.2025թ. քվեարկության արդյունքները, սահմանելով, որ քվեարկելու իրավունք ունեցող 2912 (երկու հազար ինը հարյուր տասներկու) փաստաբանից քվեաթերթիկներ ստացած ընդհանուր 1411 (հազար չորս հարյուր տասնմեկ) փաստաբանի՝ 1354 (հազար երեք հարյուր հիսունչորս) «Կողմ» (քվեաթերթիկ ստացածների 96%) ձայներով ՀՀ

փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից որոշումը համարվում է ընդունված (հաստատված):

2. Քվեարկելու իրավունք ունեցող 2912 (երկու հազար ինը հարյուր տասներկու) փաստաբանից քվեաթերթիկներ ստացած ընդհանուր 1411 (հազար չորս հարյուր տասնմեկ) փաստաբանի՝ 1354 (հազար երեք հարյուր հիսունչորս) «Կողմ» (քվեաթերթիկ ստացածների 96 %) ձայներով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից

- հաստատել ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության փոփոխությունները և լրացումները՝ համաձայն հավելվածի:

3. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված սույն որոշման հրապարակման պահից:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Գևորգյան

Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝ Աշոտ Խլոյան

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ Գագիկ Մայիլյան

Կարինե Ղաշանգյան

Հեղինե Մանուկյան

Նազիկ Մալխասյան

Հովհաննես Եգորյան

Աստղիկ Գևորգյան

Հասմիկ Թադևոսյան

ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ